ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

« »----------2010թ **N --------Ա**

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԱՐՏԻԶՊԱՆՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 23–ի «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարան տրամադրելու կարգը հաստատելու մասին.» N 983-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Առանց ծնողական խնամքի մնացած Հայկ Հովհաննեսի Պարտիզպանյանին, /ծնված 1992 թվականի փետրվարի 15-ին, հաշվառված ք. Երևան, Քաջազնունու փողոց, հ.8/1 շենք, հ.44 բնակարան, անձնագիր ԱՀ 0498786, տրված 26.03.2008թ; 011–ի կողմից/, վերցնել հաշվառման, որպես բնակարանի կարիք ունեցող անձ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Տեղեկանք

Առանց ծնողական խնամքի մնացած Հայկ Հովհաննեսի Պարտիզպանյանին որպես բնակարանի կարիք ունեցող անձ հաշվառման վերցնելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ*

Տեղեկանք

Առանց ծնողական խնամքի մնացած Հայկ Հովհաննեսի Պարտիզպանյանին որպես բնակարանի կարիք ունեցող անձ հաշվառման վերցնելու մասին Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման վերաբերյալ

Երևան քաղաքի ավագանու նշված որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների, ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայկ Պարտիզպանյանը /հաշվառված ք. Երևան, Քաջազնունու փողոց, հ.8/1շ. հ.44բն./, որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա, կենտրոնացված հաշվառման է վերցվել 2008թ. մարտի 18-ին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից /հաշվառման համար 1405 /:

Հայկ Պարտիզպանյանը 2010թ. ապրիլի 16–ին դիմել է Երևանի քաղաքապետարան՝ ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 23-ի հ. 983-ն որոշման համաձայն, որպես առանց ծնողական խնամքի մնացած անձ՝ բնակարանի հաշվառման վերցնելու խնդրանքով:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից քաղ. Հայկ Հովհաննեսի Պարտիզպանյանին տրվել է 19.03.2010թ. հ.ա/Դ-2/ 1000 *տեղեկանքն այն մասին, որ նրա անվամբ ՀՀ տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարիների ընթացքում որևէ անշարժ գույքի ձեռքբերում և օտարում չի գրանցվել:*

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ 18 տարին լրացած՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, որոնք *չունեն սեփականություն կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն* և վերջին 5 տարիների ընթացքում չեն օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունը, իրավունք ունեն ստանալու նվազագույն սոցիալական չափորոշիչներին համապատասխան բնակելի տարածություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 23.07.2003թ. հ.983-Ն որոշմամբ բնակարանի կարիք ունեցող անձը հաշվառման վերցնելու մասին դիմումը ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմին, որտեղ հաշվառման վերցնելու մասին դիմումը նրա բնակարանային պայմանների ուսումնասիրության ակտի և մյուս անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին մեկամսյա ժամկետում քննության է առնվում համայնքի ավագանու նիստում և *հաշվառման վերցվում համայնքի ավագանու որոշմամբ*:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ***Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ***